ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/97

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ Ա/Ձ Արամ Գրիգորյան Մեխակի (պետական հաշվառման համար՝ 269.1095623)

քննելով «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար մսի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ի կողմից 29.12.2021թ. ներկայացված (30.12.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/97 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ն (հետայսու նաև՝ Մասնակից) 29.12.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի դեկտեմբերի 3-ին «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը մսի ձեռքբերման նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի

հիման վրա «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով հայտարարել է գնանշման հարցում: Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել սույն թվականի դեկտեմբերի 10-ին ժամը 17:00-ին: Դեկտեմբերի 14-ին՝ նշված նիստից 4 օր հետո, հրապարակվել է գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը, ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել. «Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել սույն ամսաթվից հաշված մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում»: Մինչդեռ արձանագրությունը պետք է հրապարակվեր հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը (համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի):

Դեկտեմբերի 19-ին ծանուցվել ենք առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարար գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա ժամի և վայրի մասին: ՀՀ կառավարության՝ 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշման հավելված հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5 (բ) ենթակետի համաձայն հիշյալ ծանուցումը պետք է ուղարկվեր նիստի կասեցումից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ պատվիրատուն ուղարկել է 4 օր հետո:

Բանակցությունների նիստը տեղի է ունեցել դեկտեմբերի 22-ին ժամը 16:00, որի արդյունքում առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Լեբրոն» ՍՊԸ-ն ներկայացրել է շուկայական գներից անհամեմատ ցածր (18մլն ՀՀ դրամ) գին և ամենայն հավանականությամբ կհրաժարվի գնման գործընթացի հետագա մասնակցությունից կամ էլ չի կարող ապահովել կնքվելիք պայմանագրի պահանջները:

Բանակցությունների նիստն անցկացվել է Կարգի մի քանի խախտումներով: Մասնավորապես.

գնահատող հանձնաժողովը չի գրանցել մի քանի մասնակիցների (այդ թվում մեր) նվազեցված գնային առաջարկները: Այդ գնային առաջարկներն արվել են մինչև բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետի (տրված էր 30 րոպե) ավարտը:

Բանակցությունների նիստին ներկա էին նաև Երևանի քաղաքապետարանի մի շարք աշխատակիցներ, որոնցից մասնավորապես Բնապահպանության վարչության պետը միջամտեց գնահատող հանձնաժողովի գործունեությանը՝ չթույլատրելով մյուս մասնակիցներին ներկայացնել նոր գնային առաջարկ:

Սակայն Կարգի 40-րդ կետի 5 (դ) և 5 (ե) ենթակետերի համաձայն.

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:

Գնահատող հանձնաժողովի արձանագրության մեջ չի նշվել մեր ներկայացրած նվազեցված գնային առաջարկը:

Տեղեկացնում ենք, որ պատվիրատուն հայտարարել է նիստը ձայնագրելու մասին:

Այսպիսով պահանջում ենք, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը չեղյալ հայտարարի դեկտեմբերի 22-ին տեղի ունեցած միաժամանակյա բանակցությունների վարման նիստի արդյունքները և սահմանված կարգով անցկացնի նոր բանակցություններ»:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.01.2022թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.01.2022թ. թիվ 1 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ներկայացնում ենք «Արամ Գրիգորյան Մեխակի» ԱՁ-ի կողմից 29.12.2021թ. ներկայացված բողոքի հետ կապված և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար պարզաբանում և անհրաժեշտ փաստաթղթերը:

Հայտնում ենք Ձեզ, որ «ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ» ՀՈԱԿ-ի կարիքների համար ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 10.12.2021թ. ժամը 17.00-ին ք. Երևան

Մյասնիկյան 20 հասցեում, ինչպես նախատեսված է եղել ընթացակարգի հրավերով: Բացման նիստին օրենքով սահմանված կարգով կազմվել է բացման նիստի արձանագրություն, որը ուղարկվել է հրապարակման դեկտեմբերի 13-ին, քանի որ դեկտեմբերի 11-ը և 12-ը ոչ աշխատանքային օրեր են եղել: Հրապարակումը տեղեկագրում իրականացվել է դեկտեմբերի 14-ին: /արձանագրությունը կցվում է որպես հավելված 1/:

Բացման նիստում հանձնաժողովը որոշել է ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել նույն ամսաթվից հաշված հաշված մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Այսպիսով հայտերի գնահատման նիստը հրավիրվել է 17.12.2021թ. ժամը 17.00-ին ք. Երևան Մյասնիկյան 20 հասցեում: Հանձնաժողովը նիստում որոշել է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին հրավիրել միաժամանակյա բանակցությունների, քանի որ ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Հաշվի առնելով, որ դեկտեմբերի 18-ը և 19-ը եղել են ոչ աշխատանքային օրեր, գնահատման նիստի արձանագրությունը հրապարակվել է տեղեկագրում դեկտեմբերի 20-ին /արձանագրությունը կցվում է որպես հավելված 1/, սակայն դեկտեմբերի 19-ի երեկոյան մասնակիցներին ծանուցվել է բանակցությունների վերաբերյալ /նկարը կցվում է որպես հավելված 3/:

Բանակցությունների վարման և արդյունքների ամփոփման նիստը տեղի է ունեցել դեկտեմբերի 22-ին 16.00-ին, ք. Երևան մյասնիկյան 20 հասցեում՝ համաձայն ՀՀ կառավարության որոշման 526-Ն որոշման 40-րդ կետի գ ենթակետի:

Միաժամանակ հայտնում ենք, որ բանակցությունների վարման ժամանակ է սահմանվել 30 րոպեն, ըստ գրանցամատյանում հայտերի ներկայացման և գրանցման հաջորդականության մասնակիցներին հնարավորություն տալով գների նվազեցման: Առաջինը գնի նվազեցում կատարել է «Արամ Գրիգորյան Մեխակի» ԱՁ-ն՝ հնչեցնելով 61,500,000 դրամ, երկրորդը՝ «Նոբիլիս գրուպ» ՍՊԸ-ն՝ 54,200,000 դրամ, երրորդը «Լեբրոն» ՍՊԸ՝ 18,000,000 դրամ: Գների նվազեցման առաջին շրջափուլում որևէ այլ գին չի հնչել: Երկրորդ շրջափուլում «Արամ Գրիգորյան Մեխակի» ԱՁ-ն հնչեցրել է 50,000,000 դրամ, սակայն գնահատող հանձնաժողովի հորդորին, որ անհրաժեշտ է հնչեցնել արդեն իսկ ամենացածր գնից ավելի նվազ գին, Արամ Գրիգորյանը չի արձագանքել:

Բանակցությունների վարման և արդյունքների ամփոփման նիստը արձանագրվել է և հրապարակվել է տեղեկագրում /արձանագրությունը կցվում է որպես հավելված 4/»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 07.01.2022թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/97 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար մսի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Արամ Գրիգորյան Մեխակի ԱՁ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին դեկտեմբերի 22-ին ժամը 16:00-ին ծանուցել և հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ բանակցությունների արդյունքում առաջարկվել են հետևյալ գները.

N	Կազմակերպության անվանումը	Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ/
1	Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ	61 500 000
2	«Նոբիլիս գրուպ» ՍՊԸ	54 200 000
3	«Լեբրոն» ՍՊԸ	18 000 000
4	«Ֆոտոն» ՍՊԸ	-
5	Հայկ Սարգսյան Ա/Ձ	-
6	«Ղահրաման» ՍՊԸ	-

7	«Գոռա» ՍՊԸ	-

և որոշում կայացրել առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ մասնակիցներին.

1. «Լեբրոն» ՍՊԸ
2. «Նոբիլիս գրուպ» ՍՊԸ
3. Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ
4. «Գոռա» ՍՊԸ
5. «Ֆոտոն» ՍՊԸ
6. Հայկ Սարգսյան Ա/Ձ, «Ղահրաման» ՍՊԸ

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ի 29.12.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 04.01.2022թ. թիվ 1 և 10.01.2022թ. թիվ 2 գրությունները՝ կից նյութերով և գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.6-րդ ենթակետի

համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով

սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում,

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի.

Այսպես, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար մսի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել Արամ Գրիգորյան Մեխակի ԱՁ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցներին դեկտեմբերի 22-ին ժամը 16:00-ին ծանուցել և հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ բանակցությունների արդյունքում առաջարկվել են հետևյալ գները.

N	Կազմակերպության անվանումը	Առաջարկվող գինը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ/
1	Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ	61 500 000
2	«Նոբիլիս գրուպ» ՍՊԸ	54 200 000
3	«Լեբրոն» ՍՊԸ	18 000 000
4	«Ֆոտոն» ՍՊԸ	-
5	Հայկ Սարգսյան Ա/Ձ	-
6	«Ղահրաման» ՍՊԸ	-
7	«Գոռա» ՍՊԸ	-

և որոշում կայացրել առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ մասնակիցներին.

1. «Լեբրոն» ՍՊԸ
2. «Նոբիլիս գրուպ» ՍՊԸ
3. Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ
4. «Գոռա» ՍՊԸ
5. «Ֆոտոն» ՍՊԸ
6. Հայկ Սարգսյան Ա/Ձ, «Ղահրաման» ՍՊԸ

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ն ներկայացված բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը.

«Բանակցությունների նիստն անցկացվել է Կարգի մի քանի խախտումներով, մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովը չի գրանցել մի քանի մասնակիցների (այդ թվում մեր) նվազեցված գնային առաջարկները: Այդ գնային առաջարկներն արվել են մինչև բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետի (տրված էր 30 րոպե) ավարտը»:

Հաշվի առնելով վերը նշված փաստական հանգամանքը, ինչպես նաև բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննությունն ապահովելու նպատակով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 07.01.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/228-2022 գրությամբ դիմել է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում գտնվող ԳԲՔԱ-ՆԳ-2021/97 ծածկագրով գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրում եմ

տրամադրել «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի N 4 արձանագրության համաձայն՝ հրավիրված բանակցությունների վերաբերյալ տեսաձայնագրությունը կամ ձայնագրությունը»:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը 10.01.2022թ. թիվ 2 գրությամբ ներկայացրել է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հրավիրված բանակցությունների վերաբերյալ ձայնագրությունը:

Այսպիսով՝ քննության առարկա դարձնելով «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից անցկացված բանակցության ձայնագրությունը և գնահատելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողություններն՝ ուղղված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցության անցկացման իրավաչափությանն, արձանագրում եմ հետևյալը.

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.6-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանվում է, որ յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և ***մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը:***

Վերը նշված իրավակարգավորումների իմպերատիվ պահանջն է, որ բանակցությունները կազմակերպվեն այնպես, որ ***մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը*** մասնակիցները հնարավորություն ունենան տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները հրապարկվելուց հետո մինչև ***բանակցության համար նախատեսված ժամկետի ավարտը վերանայեն իրենց գնային առաջարկները:***

Ընդ որում՝ նույն կետի ե) պարբերությամբ սահմանվում է, որ ***բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին***, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում ու ***հայտարարվում են ընտրված և հաջորդական տեղերն զբաղեցրած մասնակիցները:***

Եվ այսպես՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից տրամադրված ձայնագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մինչև բանակցությունները սկսելը որոշում է կայացրել բանակցությունների տևողությունը սահմանել 30 րոպե:

Այնուհետև, մասնակիցների կողմից հնչեցվել են իրենց գնային առաջարկները, և արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ ըստ բանակցությանը ներկա մասնակիցների ներկայացրած գների՝ «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից հնչեցված գնային առաջարկը՝ 18 000 000 ՀՀ դրամ, հանդիսանում է ամենացածրը, և առաջարկվել է, որպեսզի մինչև բանակցության համար սահմանված ժամկետի ավարտը մասնակիցները իրենց գնային առաջարկները վերանայեն՝ հիմք ընդունելով «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից հնչեցված 18 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկը: Արդյունքում՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Լեբրոն» ՍՊԸ-ն՝ 18 000 000 ՀՀ դրամ գնային առաջարկով, ճանաչվում է ընտրված մասնակից:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.6-րդ ենթակետի դ) պարբերությամբ սահմանված պահանջների խախտում, քանի որ վկայակոչված իրավակարգավորումների համաձայն՝ մասնակիցները պետք է հնարավորություն ունենան գնային առաջարկները հրապարկելուց հետո մինչև բանակցության համար նախատեսված ժամկետի ավարտը վերանայեն իրենց կողմից ներկայացված գնային առաջարկները, այլ ոչ թե՝ գնային առաջարկ ներկայացնեն հիմք ընդունելով արդեն իսկ հնչեցված ամենացածր գնային առաջարկը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ բանակցությունների արդյունքում առաջարկվել են հետևյալ գները՝ Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ - 61 500 000 ՀՀ դրամ, «Նոբիլիս գրուպ» ՍՊԸ- 54 200 000 ՀՀ դրամ և «Լեբրոն» ՍՊԸ - 18 000 000 ՀՀ դրամ, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ բանակցության վարման ձայնագրության համաձայն՝ մինչև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից բանակցության համար սահմանված ժամկետի ավարտը հայտարարելը՝ մասնավորապես Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ի կողմից, որպես վերանայված գնային առաջարկ հնչեցվել է 50 000 000 ՀՀ դրամ, որը Ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ չի արձանագրվել, այլ արձանագրվել է միայն բանակցությունները սկսելու պահին Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ի կողմից առաջարկված սկզբնական գնային առաջարկը, այն է՝ 61 500 000 ՀՀ դրամը:

Արդյունքում՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ե) պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի 1-ին Մասի 8-րդ կետի 8.6-րդ ենթակետի ե) պարբերությամբ սահմանված պահանջները, քանի որ վկայակոչված իրավակարգավորումների իմպերատիվ պահանջ է, որ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվեն ու հայտարարվեն ոչ միայն ընտրված մասնակիցները, այլ նաև հաջորդական տեղեր զբաղեցրած մասնակիցները, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ հաջորդական տեղեր զբաղեցրած մասնակիցների վերջնարդյունքում հնչեցված գները, մասնավորապես՝ Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ի, ձայնագրության համաձայն չեն համապատասխանում 22.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրված գնին:

Այսպիսով՝ հաշվի առնելով նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները՝ գտնում եմ, որ նման խախտումներով իրականացված գործողությունների արդյունքում պետք է դադարեցնել 22.12.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացած որոշումները և հրավիրել գների շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի դ) և ե) պարբերություններով սահմանված պահանջները, այսինքն՝ մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցները հնարավորություն ունենան տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկները հրապարկելուց հետո մինչև ***բանակցության համար նախատեսված ժամկետի ավարտը <u>վերանայեն իրենց գնային առաջարկները</u>*** և ներկայացնեն նոր գնային առաջարկներ, որի համաձայն և բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին կորոշվի ընտրված և հաջորդական տեղեր զբաղեցրած մասնակիցները:

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսպիսով՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Արամ Գրիգորյան Մեխակի Ա/Ձ-ի կողմից 29.12.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝

Պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել հանձնաժողովի 22.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած բոլոր որոշումները,

2. Անցկացնել գների նվազեցման շուրջ միաժամանակյա նոր բանակցություններ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**